

աւելի կարճ են քան թէ արանց, անոր համար անոնց ձայնը՝ ինչպէս արդէն ծանօթ է, աւելի բարձր է այրական ձայնէն, որ գրեթէ ութեակ մը ձայնաստիճան (Octave) աւելի ցած է կանանց ձայնէն: Երգելու ժամանակ ձայնը բարձրացընելն ու ցածցընելն աւելի արտաշնչեալ ոգոյ սաստիկութենէն քան թէ ձայնակապելու ընդլայմանէ կամ անձկանալէ կ'ըլլայ: Ցած ձայները ոգոյ մեծ քանակութիւն կը պահանջեն, անոր համար ալ աւելի լայն թոր է եւ ընդարձակ ոդանցը կ'ենթադրեն: Բարձր ձայն առնուած միջոցին՝ խռչափողը վեր կ'իջէ, որով շնչափողը կ'երկնայ եւ կ'անձկանայ, եւ ոգը սաստիկ զօրութեամբ դուրս չի կրնար ելլել: Գեղեցիկ ձայնի մը սովորական տարածութիւնը 2 միշեւ 2 1/2 ութեակ (16—20 ձայնաստիճան) է, եւ եթէ մեկուն ձայնի գործարանն շատ լաւ է, նոյնպիսին շարունակեալ կրթութեամբ 3, միշեւ անգամ 3 1/2 ութեակ (24, միշեւ 28 ձայնաստիճանի) կրնայ ձայնը բարձրացընել:



ՔԱՂԱՔԱՔԱՔԱՔԱ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վիեննա, 30 Յունուար 1894:

Գրեթէ չորս տարի էր որ այժմու Գերմանիոյ գլխաւոր հիմնադիրներէն մին՝ իշխան Պիզմարը՝ իւր պաշտօնէն հրաժարած կամ՝ հրաժարիլ ստիպուած էր: Այն ժամանակէն ի վեր խուլ հակառակութիւն մը կար իրեն եւ իւր կողմակցաց եւ նոր վարչութեան եւ անոր քաղաքական ընթացքին մէջ, եւ շատ անհաճոյ միջադէպերու առիթ տրուեցաւ: Այժմ՝ կարելի եղաւ վերջնական հաշտութիւն ընել երկու կողմանց: Արդէն քիչ ժամանակ յառաջ կայսրն իւր կողմանէ քայլ մ'առած էր այս նկատմամբ. մօտ օրերս խաւրելով իշխանին շիշ մը հնազոյն գինի իբր ընծայ՝ իշխանը շնորհակալ եղաւ եւ խոստացաւ անձամբ ալ կայսրը ներկայանալ: Ինչպէս այցելութեան ժամանակ, որ ամսոյս 26ին պատահեցաւ, իշխանն այնպիսի պատիւներով ընդունուեցաւ, որ միայն վեհապետաց կը ցուցուին սովորաբար:

Գերմանիոյ մէջ խնդրոյ նիւթ է դրամական նոր օրինագիծն՝ որուն նպատակն է անցեալ տարւոյ զինուորական նոր օրէնքին համար պէտք եղած ահագին գումարները հայթայթել: Ճակատին տարակուսական է որ ընդունուի օրինագիծը:

Գաղղիոյ Երեսփոխանաց ժողովրդին վերջին ծանօթ դէպքէն ի վեր խոստութեամբ սկսաւ վարուիլ վարչութիւնը անիշխանականաց հետ, եւ ամսոյս սկիզբն ըլլոր երկրին մէջ քաղմութիւն հետագոստութիւնը կատարուեցան եւ անիշխանականաց շատ մը զաղտնիք յերեւան ելան, ըայց նաեւ ժողովրդեան շատ մեծ մասին խեղճութիւնը, որոնց քովալ քննութիւններ եղան՝ շփոթմամբ անիշխանական կարծուելով: Այս մասին արդարացի տրտուեցներ եղան այս վարմանց դէմ: Անիշխանականը այս օրերս ուզեցին երեսփոխանաց ժողովրդին մէջ վարչութեան դէմ ցոյց մ'ընել, ըայց յաջողութիւն չունեցան:

Միւս կողմանէ՝ Բլէմանտոյ սկսած է նաւատորմի վարչութեան մէջ գործուած շատ մը զեղծմունք յերեւան հանել, որոնք անշուշտ մեծ աղմուկ պիտի յարուցանեն:



ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄԵՆՆԵՐ

ԲԱՆԱՄԻՐԱՆՆԵՐ — Ռոքակցութիւն. 33:

ՊԱՏՄԱՆՆԵՐ — Հունգարահայոց մայրաքաղաք (Կեղւոս հայաքաղաքն) ի գեր եւ ի պատկերս. 36:

ՄԱՏՆԱՆՈՍՄԱՆՆԵՐ — Կինս իբրեւ ամուսին. 41:

ԼԵՋՈՒՄԱՆՆԵՐ — Յունական փոխառեալ քառեր հայերէնէն մէջ. 47:

ԳՐԱՆՆԵՐ — Յուցակ հայերէն ժողովրդաց Ս. Կարապետի վանաց Փնուղի. 49:

ԹՂԱՅՈՒՆԹԻՒՆ — Նորագոյն աղբքը Մ. Խորենայայ. 53:

ՏԵՍԻՒԹԵՐ

2այր. 67:

ՔԱՂԱՔԱՔԱՔԱ ՏԵՍՈՒԹԻՒՆ. 68:



ՀԱՐԱՐԱՆԿԱԿ ԾԻ ՊԱՏՄԱՆՆԵՐԻ ՆՍՏԱՆԻՐ

Կ. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐՈՆՅ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԻԹԵՐԵՆԱ. ՑԳԱՐԱՆ